ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար հաշվառման գրքերի ձեռքբերման
նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/07» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «21» մարտի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/07» ծածկագրով ընթացակարգի շրջանակում Յասոն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության շտկման և հայտի գնահատման արդյունքի վերաբերյալ.

Յասոն ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը որոշեց.

Յասոն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, մերժված հայտի և ընթացակարգը 6-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով Յասոն ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի՝ Աստղիկ Գրատուն ՍՊԸ-ի հայտը մերժել:

2.2. 6-րդ չափաբաժնի մասով՝ Աստղիկ Գրատուն ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գինը գերազանցել է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը, ուստի նշված չափաբաժնի մասով ներկայացված հայտը Համակարգի կողմից համարվել է մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ գնման ընթացակարգը 6-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Վահագն Հարությունյան

Անդամներ՝ _____ Արթուր Ասատրյան

_____ Նելա Մուրադյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան